— Նայէ՛, Տիկին, տե՛ս,— պատասխանեց Խոսրով:

Եւ իրօք Տիկինն ալ ապուշ մնաց տեսնելով Արծրունեաց պատանդները, որ զուարթերես մէկիկ-մէկիկ ներս կը մտնէին իրենք յարգանքը մատուցանելու մեծ Տիկնոջն Արծրունեաց:

— Այս ի՞նչ է, այս ի՞նչ յետադարձ է,— կ'ըսէր Տիկինը զայրացեալ,— այսպէս դուք մեզ կը խաբէք. ձեր փախուստը չէ՞ք իմանար թէ ոստիկանը խաբել չէ՝ այլ զմեզ:

— Բայց չէ, Տիկին, ոստիկանը ձեզի օրեր՝ ինքն էլ եւ բոլոր իր զօրքն էլ չի կան՝ կ'ոտրուեցան ամէնքն էլ:

— Ի՞նչ կ'ըսէք. ո՞վք էին այդ յիմար գործողութիւնն ընողներն:

— Սասունցիք:

— Սասունցի՞ք:

— Այո, սասունցիք իրենց գլուխը Յովնան ունենալով եկան Մուշ կոխեցին, արաբները բոլոր ջարդեցին, Իւսուֆ ոստիկանն սպաննեցին, մեզ էլ ազատեցին եւ իրենք գնացին Ս. Կարապետի վրայ յարձակող խումբին դէմ:

— Յովնանեն զատ ուրիշ գլուխ չի կա՞ր այս սասնցուց:

— Գուրգէն իշխանն էլ միատեղ էր, բայց նա չէր հրամայէր:

— Գուրգէ՞ն, Արծրունի՞ն, ի՞մ տղաս, նա՞ այդպիսի յիմարութիւն ըրաւ:

— Ո՛չ, Տիկին, մեր Գուրգէն իշխանը չէր. ուրիշ Գուրգէն մ'էր սա: Մենք զինք չէինք տեսած, բայց սա էլ Արծրունի էր:

Եւ այս խօսքերն պատանիքը ամէնքը մէկտեղ կը զրուցէին, իսկ Տիկինը, որ գունատ եալ եւ մինչեւ հիմա կանգնած կիրքով կը խոսէր,